TESIM
Technical support to the implementation and management of ENI CBC programmes

Պատրաստվեք ծրագրերի հայտահրավերին ԵՀԳ ԱՍՀ գործընկերություններ կառուցելու և ԵՀԳ ԱՍՀ ծրագրային հայտ կազմելու հերթական քայլերը

Սևծովյան ավազանի երկրների ԵՀԳ ԱՍՀ 2014-2020թթ. ծրագիր

ԱՍՀ-ի նախագծի գաղափարի հստակեցում

- Անդրսահմանային մարտահրավերների և հնարավորությունների վերհանում
- Անդրսահմանային մարտահրավերներին և համագործակցությանն ուղղված ծրագրային գաղափարների վերհանում
- Թիրախային խմբերի/վերջնական շահառուների հստակեցում
- Ստուգել՝ արդյոք նախագծի մտահղացումը համընկնում է ծրագրի գերակայությունների հետ և նպաստում է դրա նպատակի իրականացմանը
- Վերհանել ծրագրի գործունեության աշխարհագրական գոտում հնարավոր գործընկերներին

Նախագծի գաղափարի ձևակերպում և գործընկերների որոնում

- Ձևակերպել նախագծի հիմնական նպատակները և ակնկալվող արդյունքները
- Գնահատել նախագծի ամբողջ բյուջեն և ստուգել՝ արդյոք բյուջետային սահմանափակումներ նշված են հայտահրավերում
- Փնտրել գործընկերներին կամ ներկայացրեք Ձեզ on http://blacksea-cbc.net/partner-search/ կայքէջում
- Կազմել նախագծի մեկ էջանոց համառոտագիր
- Կապվել հնարավոր գործընկերների հետ և ներկայացնել նախագծի մտահղացման համառոտագիրը

Ձեր գործընկերների հետ համատեղ գաղափարի մշակում

- Գործընկերոջ հետ համաձայնեցնել համատեղ նախագծի նպատակները, ակնկալվող արդյունքները և հիմնական արտադրանքը
- Հստակեցնել անդրսահմանային համագործակցության ազդեցությունը
- Որոշարկել գործընկեր կազմակերպությունների ներկայացուցիչներին, ովքեր աշխատելու են առաջարկի վրա
- Հստակեցնել նախագծի առաջարկի կազմմանը մասնակցող յուրաքանչյուր գործընկերոջ պարտականությունները և ժամկետները
- Համատեղ մտահղացումը քննարկել շահառուների հետ, հստակեցնել հնարավոր գործակցությունները և փոխլրացման հնարավորությունները

Համատեղ նախագծի առաջարկի մշակում

- Հստակեցնել համատեղ նախագծի թիրախային խմբերին և վերջնական շահառուներին
- Վերլուծել ենթադրությունները, պայմանները և ռիսկերը
- Հստակեցնել նախագծի հորիզոնական և միջանկյալ թեմաները
- Մշակել հստակ չափորոշիչներ նախագծի ապագա արդյունքերը չափելու համար
- Պարզել, թե որքանով են կենսունակ նախագծի շոշափելի և ոչ շոշափելի արդյունքները
- Սկսել օժանդակ փաստաթղթերի և հայտի հավելվածների փաթեթի հավաքումը

Համատեղ հայտի մշակում

- Մշակել նախագծի միջոցառումները, բյուջեն և աշխատանքային պլանը
- Սահմանել համատեղ նախագծի կառավարման կառուցվածքը
- Գրանցվել Էլեկտրոնային մոնիտորինգի (eMS) համակարգում և լրացնել հայտի ձևը
- Առաջարկը ներկայացնել հիմնական շահառուներին և ուսումնասիրել նրանց կարծիքը
- Կազմել գործընկերության մասին համաձայնագիր և ստորագրել գործընկերության հայտարարագրերը
- Ստուգել բոլոր օժանդակ փաստաթղթերը և հավելվածները
- Ստուգել, թե արդյոք հայտի փաթեթը համապատասխանում է ադմինիստրատիվ և գնահատման չափանիշներին, մասնակցության պայմաններին
- Պարզաբանումների համար դիմել Համատեղ տեխնիկական քարտուղարությանը/Կառավարման մարմնին նախքան հարցերի ներկայացման վերջնաժամկետը

Համատեղ հայտափաթեթի կազմում

- Թարգմանել պահանջվող փաստաթղթերը և ստուգել լրացված հայտը
- Առաջարկի տեքստի ոճը և կառուցվածքը ստուգել անծանոթ աչքով և ավարտուն տեսքի բերել առաջարկը
- Վերջնական ստուգել և առցանց ներկայացնել հայտը և բոլոր պահանջվող հավելվածները
- Պահպանել հայտի և բոլոր օժանդակ փաստաթղթերի օրինակները
- Գործընկերների հետ միասին պատրաստ լինել անհրաժեշտության դեպքում պարզաբանումներ տալու